ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N o 140-Ա/2 « 12 » փետրվարի 2020թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 553-Ա/2 ԵՎ N 557-Ա/2 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի օգոստոսի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը կազմակերպելու, մրցույթի հայտարարության տեքստը և հրավերի փաթեթը հաստատելու և մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդ ձևավորելու մասին» N 553-Ա/2 և «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին

հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթը կազմակերպելու, մրցույթի հայտարարության տեքստը և հրավերի փաթեթը հաստատելու և մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքները համակարգելու նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդ ձևավորելու մասին» N 557-Ա/2 հրամաններով հաստատված N 3 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «2. Հարությունյան Սամվել Գառնիկի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր» բառերը փոխարինել «2. Հայոցյան Սարգիս Սամվելի քիմիական գիտությունների թեկնածու» բառերով.

2) «3. Սահակյան Վարդան Հայաստանի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու» բառերը փոխարինել «3. Մովսիսյան Արտուր Եղիշի» բառերով.

3) «4. Ջավադյան Արտաշես Սերգեյի բժշկական գիտությունների թեկնածու» բառերը փոխարինել «4. Ղարիբյան Կարեն Բորիսի տեխնիկական գիտությունների թեկնածու» բառերով.

4) «5. Ղարիբյան Կարեն Բորիսի տեխնիկական գիտությունների թեկնածու» բառերը փոխարինել «5. Վիրաբյան Անի Մարտունի» բառերով:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ